

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2018 թվականի  
դեկտեմբերի 10-ին կայացած Գիտական Խորհրդի N6 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 34-ը (ցուցակը կցվում է)

**Օրակարգ**

1. Ուսանողների հաճախումները և աշխատանքային կարգապահությունը ֆակուլտետում  
/զեկ. փոխդեկան Ա.Թ.Գրիգորյան/
2. «Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքների քննարկում  
/զեկ. փոխդեկան Վ.Պ.Վարդանյան/
3. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների և դեկավարների  
հաստատում /զեկ. ամբ.վարիչներ/
4. Ընտրություն
5. Ընթացիկ հարցեր

1. **ԼՍԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի փոխդեկան Ա.Գրիգորյանի հաղորդումը ֆակուլտետում ուսանողների հաճախումների և աշխատանքային կարգապահության վերաբերյալ: Նա նշեց, որ ուսանողների հաճախումների մասին միանշանակ հնարավոր չէ խոսել, քանի որ որոշ կուրսերում մասնավորապես՝ ցածր կուրսերում, հաճախումների մակարդակը բարձր է, ինչը չի կարելի ասել բարձր կուրսերի մասին: Իր խոսքի ընթացքում Ա.Գրիգորյանը մասնագիտություն առ մասնագիտություն անվանական ներկայացրեց առկա և հեռակա ուսուցման ուսանողների բացակայությունները: Հաղորդման ընթացքում Ա.Գրիգորյանը հաղորդման ընթացքում շեշտադրեց առավելագույն 100 ժամ բացակա ունեցող ուսանողների անհարգելի բացակայությունները: Խոսքի ավարտին Ա.Գրիգորյանն առաջարկեց կուրատորներին հետևողական լինել:

**ՀԱՐՅԵՐ ՏՎԵՑԻՆ.** Գ.Ալեքսանյանը փորձեց ճշտել կան արդյո՞ք բացակայություններն ըստ առարկաների:

*Թ. Գ. Վարդանյանը* ցանկացավ ճշտել արդյո՞ք նշված ժամաքանակով բացակա ունեցող ուսանողները ենթակա են հեռացման:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

*ՈւՆ նախագահ Լ.Հունանյանը* ներկայացրեց «մոնիթորինգային կազմակերպության» գործունեությունը, որը կազմակերպվել է ուսանողներին Ուսանողական խորհուրդ ներգրավելու և ուսանողական կյանքին մասնակից դարձնելու համար: Իր խոսքում Լ.Հունանյանը խնդրեց ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմին ընդառաջել ուսանողներին ուսանողական խորհրդի աշխատանքներում ներգրավելու համար:

*դոց. Գ. Փ. Ալեքսանյանն.* առաջարկեց ուսանողներին լսարան բերելու համար սկսեն «մոտիվացիոն» փուլից, որից հետո միայն նշել բացակաները և ուսանողների հանդեպ կիրառել պատժիչ միջոցներ: Հանդես եկավ նաև հարցադրումով, թե արդյո՞ք համալսարանի պայմանները թույլ են տալիս ուսանողին դասերից հետո համալսարանում մնալու՝ օրվա ընթացքում ձեռք բերած տեղեկատվության յաուրացման համար: Խոսեց նաև ուսանողների այն զանգվածի մասին, որը չի ուզում սովորել: Ելույթի ավարտին Գ.Ալեքսանյանն առաջարկեց մոտիվացիոն միջավայր ստեղծել:

*ուսանող Մ.Համբարձումյան.* Ողջունեց խորհրդի անդամներին և կոչ արեց ավելի խորը դիտարկել ուսանողի բացակայության հարցը, քան «հաճախումների 2 միավորի» հարթության վրա դիտարկելը: Կարևորեց 3-րդ և դրանից բարձր կուրսերում ուսանողին մոտիվացնելը: Առաջարկեց նախատեսված երկու 40 լսարանային դասաժամերն անցկացնել պայմանական որոշակի հատվածներով՝ «դասախոսական», «քննարկումներ» և «խմբային»:

*ուսանող Ն.Մակարյանը.* ուսանողների բացակայությունը ո՛չ «հաճախումների 2 միավորի», ո՛չ էլ ուսանողի աշխատելու հետ է կապված, խնդիրն ավելի խորն է և իմ կարծիքով ուղղակիորեն կապված է ուսանողների դիրքորոշուման հետ ինչպես նաև տվյալ մասնագիտության հեռանկարային կամ անհեռանկարային լինելու հետ (որպես օրինակ բերեց իրավագիտության և տնտեսագիտության մասնագիտությունները):

*պրոֆ. Վ. Վարդանյանը.* ի պատասխան նախորդ ելույթի նշեց, որ վերոնշված իրավագիտության և տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների ծագումը

հնարավորություն է տալիս չաշխատելու ի տարբերություն բնագիտական ֆակուլտետների ուսանողների: Նշեց նաև հանրակացարանների բացակայության բացասական դերը: Այդ հանգամանքը դրդում է ուսանողներին գոյությունը պահելու համար աշխատել ուսման հաշվին:

**դոց.Ս.Սուվարյան.** - Կարծիքներ հնչեցին, որոնք վկայում են, որ կան խնդիրներ, որոնք պետք է գտնեն իրենց լուծումները: Ս.Սուվարյանի ցավով նշեց, որ դեռ չի վերացել «Բոլորը մեղավոր են բացի ինքներս մեզանից» հոգեբանությունը: Նշեց նաև, որ ֆինանսական և տնտեսական վիճակը միակ պատճառը չէ և, որ յուրաքանչյուրս ինքներս մեզանից պետք է սկսենք ուսանողին լսարան բերելու գործընթացը: Ս.Սուվարյանը կոչ արեց դասավարման ընթացքը հետաքրքիր դարձնելու նպատակով որդեգրել “Հարցազրույց, քննարկում երկխոսություն” մեխանիզմը:

**դոց.Ս.Գրիգորյան.** Բոլոր ելույթներն էլ ընդունելի են և ժխտելի չեն: Սակայն կա իմնախնդիրների հիմնախնդիրը, որը լուծելու համար ունենք բոլոր նախադրյալները: Ֆակուլտետը կարելի է ասել ամենահագեցվածն է տեխնիկայով, լաբորատորիաներով, կա բարյացկամություն դասախոս-ուսանող հարաբերություններում: Իմ կարծիքով գերխնդիրը դասախոսի ներկայացրած նյութն է և դրա հետաքրքրության աստիճանը:

Ցավով նշեց նաև, որ պետք է աշխատենք իր ցանկությանը հակառակ ֆակուլտետ պատահաբար ընկած կոնստիդենտի հետ՝ փորձելով այդ ուսանողին բերել «ուսման դաշտ»: Կոչ արեց վերանայենլ մոտեցումները առարկայի նկատմամբ: Շեշտադրեց ամբիոնների դերը այդ հարցում և հանձնարարեց ամբիոնների վարիչներին հետևողական լինել և զբաղվել ուսանողների հաճախումներով:

**ուսանող Ա.Հակոբյան.** Խոսքի ընթացքում Ա.Հակոբյանը նշեց, որ իր շփումը մեծ է եղել ուսանողների հետ և մի նկատառում կատարեց, որ ուսանողը որպես աշակերտ գալիս է համալսարան և այդպես էլ ավարտում այն: Ուսանողը տարբեր առարկաների ընթացքում տարբեր նյութ պետք ստանա: Դասախոսներ կան ովքեր 5 րոպե ուշանալուց հետո արգելում են ուսանողին լսարան մտնելու: Արդյոք եկող ուսանողը 4 տարի հետո իրեն համարում է կարող ուժ: Առաջնահերթ է եկող ուսանողին գիտելիք տալը որից հետո նոր մոտիվացնել չեկողին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** ընդունել ի գիտություն

**2. ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի փոխդեկան Վ.Վարդանյանի հաղորդումը «Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքների վերաբերյալ: Նա մանրամասն ներկայացրեց ֆակուլտետում ամբիոնի ստացած միավորները: Մանրամասն ներկայացրեց ուսանողների կողմից կատարված գրառումները: Անվանական նշեց առավելագույն և նվազագույն միավոր ունեցող դասախոսներին: Նշեց նաև սոց.հարցման արդյունքներով հավելավճար ստացող դասախոսների անունները:

**ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՆ.**

**դոց.Մ.Ա.Գրիգորյանը.** Նշեց, որ կարևոր է թեկուզ մեկ ուսանողի կարծիքը: Կարծում եմ այդ հարցումը անհրաժեշտ է և պետք է հաշվի նստենք ուսանողների կողմից հնչեցրած, գրված կարծիքերի հետ,-ասաց Մ.Գրիգորյանը: Ներկայացրեց ուսանողները կողմից կատարված գրառումները:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** ընդունել ի գիտություն

**3.**

**3.1 ԼՄԵՑԻՆ.** «Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի» ամբիոնի վարիչ դոց.Պ.Դավթյանի հաղորդումը մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** հաստատել ներկայացված թեմաներն ու ղեկավարներին (թեմաները կցվում են):

**3.2 ԼՄԵՑԻՆ.** «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի վարիչ դոց.Ն.Հարությունյանի հաղորդումը մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** հաստատել ներկայացված թեմաներն ու ղեկավարներին (թեմաները կցվում են):

**3.3 ԼՄԵՑԻՆ.** «Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության» ամբիոնի վարիչ դոց.Հ.Բալյանի հաղորդումը մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* հաստատել ներկայացված թեմաներն ու ղեկավարներին (թեմաները կցվում են):

**3.4 ՀՄԵՑԻՆ.** «Մերվիսի» ամբիոնի վարիչ դոց.Գ.Ալեքսանյանի հաղորդումը մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* հաստատել ներկայացված թեմաներն ու ղեկավարներին (թեմաները կցվում են):

**3.5 ՀՄԵՑԻՆ.** «Երկրաֆիզիկայի» ամբիոնի վարիչ դոց.Գ.Մարկոսյանի հաղորդումը մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* հաստատել ներկայացված թեմաներն ու ղեկավարներին (թեմաները կցվում են):

**3.6 ՀՄԵՑԻՆ.** «Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման» ամբիոնի վարիչ դոց.Ռ.Մովսեսյանի հաղորդումը մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* հաստատել ներկայացված թեմաներն ու ղեկավարներին (թեմաները կցվում են):

**3.7 ՀՄԵՑԻՆ.** «Ռեգիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների» ամբիոնի վարիչ դոց.Շ.Խաչատրյանի հաղորդումը մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* հաստատել ներկայացված թեմաներն ու ղեկավարներին (թեմաները կցվում են):

**3.8 ՀՄԵՑԻՆ.** «Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության» ամբիոնի վարիչ պրոֆ.Ս.Հայրոյանի հաղորդումը մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* հաստատել ներկայացված թեմաներն ու ղեկավարներին (թեմաները կցվում են):

**4. ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **մանդատային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի** հաղորդումը Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի պրոֆեսոր, երկրաբանական գիտությունների դոկտոր Սարգիս Հրաչիկի Հայրոյանի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը նշեց, որ Ս.Հայրոյանի գիտամանկավարժական և ամբիոնում ծավալված գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են ԵՊՀ-ում գործող կանոնակարգի պահանջներին՝ ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնելու համար:

Մանդատային հանձնաժողովը որոշել է հարգել Սարգիս Հրաչիկի Հայրոյանի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու դիմումը և միջնորդում է ֆակուլտետի Գիտական խորհրդին «Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** **Մ.Ա.Գրիգորյանը:** Նա բարձր գնահատեց Ս.Հ.Հայրոյանի գիտամանկավարժական գործունեությունը ֆակուլտետում: Իր խոսքում Մ.Ա.Գրիգորյանը շեշտեց, որ, Ս.Հայրոյանի ամբիոնի վարիչի պաշտոնավարման ժամանակահատվածում, ամբիոնը ցուցաբերել է ուսումնական աշխատանքների կազմակերպման բարձր մակարդակ:

Մ.Գրիգորյանն առաջարկեց հարցը դնել փակ (գաղտնի) քվեարկության:

**Փակ (գաղտնի) քվեարկություն** անցկացնելու համար առաջարկվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ Վահրամ Պանդուխտի Վարդանյան, անդամներ՝ Արամայիս Ռուստամի Ավագյան, Ակսել Հարությունի Պոտոսյան:

**ԼՄԵՑԻՆ.** Հաշվիչ հանձնաժողովի նախագահ պրոֆ. Վահրամ Պանդուխտի Վարդանյանի հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 38 անդամներից քվեարկության մասնակցել են 32-ը: Սարգիս Հրաչիկի Հայրոյանի

«Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության» ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու հարցում կողմ են քվեարկել 32-ը, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (զաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և հաստատել Սարգիս Հրաչիկի Հայրոյանի «Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության» ամբիոնի վարիչի պաշտոնում:

## **5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ**

**ԼՄԵՑԻՆ.** Մեթոդ.խորհրդի նախագահ Թ.Գ.Վարդանյանի հաղորդումը Երկրաֆիզիկայի ամբիոնի ասիստենտ Մ.Մկրտչյանի կողմից ներկայացված «Երկրի ֆիզիկա» դասընթացի գործնական և լաբորատոր աշխատանքների մեթոդական ցուցումները տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ.** Երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչ Գ.Մարկոսյանը նշեց, որ ներկայացված մեթոդական ցուցումներն անհրաժեշտ են «Երկրի ֆիզիկա» դասընթացի գործնական և լաբորատոր աշխատանքներն իրականացնելիս: Ելույթի ավարտին Գ.Մարկոսյանն առաջարկեց «Երկրի ֆիզիկա» դասընթացի գործնական և լաբորատոր աշխատանքների մեթոդական ցուցումները երաշխավորել տպագրության:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Երաշխավորել «Երկրաֆիզիկայի» ամբիոնի ասիստենտ Մարինե Մկրտչյանի «Երկրի ֆիզիկա» դասընթացի գործնական և լաբորատոր աշխատանքների մեթոդական ցուցումները տպագրման և հրատարակման ներկայացնելու համար:

**Խորհրդի նախագահ**

**Մ.Ա.Գրիգորյան**

**Խորհրդի քարտուղար**

**Ե.Ս.Մանուկյան**